

Տեղեկատվություն
Ընդդեմ գենդերային բռնության 2011 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված
աշխատանքների մասին

	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն			
1.	Քաղաքացիական ծառայողների գենդերային բռնության վերաբերյալ գիտելիքների դասավանդման համար ծրագրային և ուսումնամեթոդական հիմքի ստեղծում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և ԵԱՀԿ Երևանի գրասենյակի <<Թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոն>> ծրագրի շրջանակներում մշակվել է գենդերային բռնության և թրաֆիքինգի վերաբերյալ ուսուցման բաղադրիչ քաղաքացիական ծառայողների դասավանդման համար: Այն ներառվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N 567-Ա որոշմամբ հաստատված ծրագրով <<Գենդերային հիմնահարցեր>> և <<Մարդու իրավունքներ>> թեմաներով քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներում: 2011թ. Ընթացքում վերոհիշյալ թեմաներով վերապատրաստվել են 274 քաղծառայողներ:	ԵԱՀԿ ՀՀ պետական բյուջե
2.	Գենդերային բռնության ենթարկված անձանց ուղղորդման մեխանիզմի վերաբերյալ առաջակությունների ներկայացում	«Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագիրը շրջանակներում մշակվել է «Հայաստանի հանրապետությունում գենդերային բռնությունից տուժածների համար ուղղորդման մեխանիզմի ստեղծման առաջարկությունները» փաստաթուղթը, որի շնորհանդեսը տեղի ունեցավ հոկտեմբերի 11-ին ՄԱԿ-ի գենդերային թեմատիկ խմբի հերթական նիստի ընթացքում: Փաստաթղթում բարձրացված խնդիրների և առաջարկությունների շուրջ առաջիկա տարիներին <<Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրի>> շրջանակներում կմշակվի գենդերային բռնության ենթարկված անձանց ուղղորդման մեխանիզմի վերաբերյալ առաջարկությունների փաթեթ:	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ

<p>3. Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների և համայնքային ծառայողների, Երևանում և ՀՀ մարզերում գենդերային հարցերով խորհրդատվական մարմինների ներկայացուցիչների, լրագրողների համար գենդերային բռնության հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում</p>	<p>Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը համատեղ ՀՀ մարզաշրջաններում կազմակերպել են հանդիպումներ մարզերում ստեղծված գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների հետ: Կլոր-սեղան քննարկումներին մասնակցել են շահագրգիռ մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ՀԿ-ների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են պետական քաղաքականության մեջ գենդերային բռնության կանխարգելման մեխանիզմների ներդրման, գենդերային կարծրատիպերի հաղթահարման և լուսաբանմանն ուղղված հարցեր:</p>	<p>ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ</p>
<p>4. Հասարակության տարբեր խմբերի, այդ թվում երիտասարդների և առավել խոցելի խմբերի շրջանում գենդերային բռնության երևույթի և դրա դեմ պայքարի</p>	<p>«Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից իրականացվել է գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված ծրագիր, որի շրջանակներում կազմակերպվել են հոգևորականների հանդիպումներ դպրոցականների, նրանց ծնողների և ուսուցիչների հետ: Երիտասարդների շրջանում բաժանվել են գենդերային բռնության երևույթի և դրա դեմ պայքարի վերաբերյալ տեղեկատվական նյութեր: Աշխատանքն իրականացվել է ՀՀ 9 մարզերում, որին մասնակցել են 55 դպրոցների ավելի քան</p>	<p>ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ</p>

	վերաբերյալ տեղեկատվական նյութերի տարածում գենդերային բռնության կանխարգելման նպատակով	4,000 աշակերտներ, ուսուցիչներ և ծնողներ:	
5.	Գենդերային բռնության դեմ ուղղված հասուն կանանցիկների իրականացում	Հանրապետությունում նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10-ը «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ և «Սպիտակ ժապավեն» հանրապետական քարոզարշավները, որի շրջանակներում իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ՝ կանանց նկատմամբ բռնությանը վերաբերող հետազոտության արդյունքների ներկայացում, բեմադրություն, ռոք համերգ, սոցիալական տեսահոլովակների և ֆիլմերի ցուցադրում: Քարոզարշավի շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը կազմակերպել են կլոր սեղան-քննարկումներ բոլոր մարզերում, որին մասնակցում էին մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, ՀԿ-ների և ՋԼՄ-ների ներկայացուցիչները: Հանդիպումների ընթացքում մասնակիցներին տրամադրվել են համապատասխան տեղեկատվական և մեթոդական նյութեր, բուկլետներ, պլակատներ, տեսահոլովակներ և այլն:	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն			
1.	Հանրակրթական դպրոցների և մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողների համար	<<Վստահություն>> սոցիալական աշխատանքի և սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը առանձին թիրախային խմբերի համար կազմակերպվել է գենդերային բռնության թեմաների վերաբերյալ դասընթացներ, որում ընդգրկվել են հանրապետության ավագ դպրոցների շուրջ 70 աշակերտներ և մանկավարժական բուհերի 32 ուսանողներ:	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ

	<p>գենդերային բռնության վերաբերյալ ուսուցողական միջոցառումների կազմակերպում</p>	<p>Մարդկային Չարգացման Միջազգային Կենտրոնը ՀՀ բոլոր մարզերում կազմակերպել է ուսուցողական միջոցառումներ գենդերային բռնության թեմաների վերաբերյալ, որում ընդգրկվել են հանրակրթական դպրոցների շուրջ 570 և մասնագիտական ուսումնական հաստատությունների 340 սովորողներ:</p>	
<p>2.</p>	<p>Ուսուցիչների և բուհերի դասախոսների համար գենդերային բռնության վերաբերյալ դասախոսությունների կազմակերպում</p>	<p><<Վստահություն>> սոցիալական աշխատանքի և սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը գենդերային բռնության թեմաների վերաբերյալ դասախոսություններ է կազմակերպել հանրակրթական դպրոցների շուրջ 50 մանկավարժների և հանրապետության տարբեր բուհերի 35 դասախոսների համար: Մարդկային Չարգացման Միջազգային Կենտրոնի կողմից հանրապետության տարբեր մարզերում գենդերային բռնության թեմաների վերաբերյալ կազմակերպված դասախոսություններին, կլոր սեղաններին ու քննարկումներին մասնակցել են շուրջ 365 դասավանդողներ՝ հանրակրթական դպրոցների ուսուցիչներ ու մասնագիտական ուսումնական հաստատությունների դասախոսներ:</p>	<p>ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ</p>
<p>3.</p>	<p>Ծնողների համար երեխաների խնամքի ու դաստիարակության վերաբերյալ ուսուցման կազմակերպում</p>	<p><<Քայլ առ քայլ>> ԲՀ-ն Արարատի, Վայոց Ձորի, Կոտայքի, Տավուշի, Արագածոտնի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում թվով 10 կրթական հաստատություններում ծնողների շրջանում անցկացրել է կարճատև ուսուցողական դասընթացներ՝ երեխաների խնամքի և դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության կարևորության, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ: Նշված դասընթացներում ընդգրկվել է շուրջ 250 ծնող: Մարդկային Չարգացման Միջազգային Կենտրոնի կողմից ծնողների շրջանում գենդերային բռնության թեմաների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու, ինչպես նաև գենդերային</p>	<p>Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ</p>

		կարծրատիպերը հաղթահարելու նպատակով կազմակերպված ուսուցողական դասընթացներում ընդգրկվել է շուրջ 170 ծնող:	
4.	Հանրակրթական դպրոցներում <<Առողջ ապրելակերպ>> դասընթացի իրականացում	Հայաստանի բժիշկ ուսանողների գիտական ասոցիացիայի (ՀԲՈԻԳԱ) կողմից իրականացվող` <<Առողջ ապրելակերպ>> առարկայի դասավանդման համար կայուն համակարգի հիմնում>> ծրագրի շրջանակներում 10-րդ և 11-րդ դասարանների համար մշակվել է <<Առողջ ապրելակերպ>> դասընթացը և տպագրվել է դասընթացի իրականացման համար նախատեսված ուսուցչի ձեռնարկը, վերապատրաստվել է «Առողջ ապրելակերպ» դասընթացի շուրջ 600 ուսուցիչ: Մշակվել է նաև 8-9-րդ դասարանների համար «Առողջ ապրելակերպ» դասընթացի ուսուցիչների վերապատրաստման նյութերի փաթեթը: Դասընթացը նպաստել է սովորողների մոտ առողջ ապրելակերպի և ընտանեկան կյանքի նախապատրաստման հիմունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ
ՀՀ Ոստիկանություն			
1.	Ոստիկանության աշխատակիցների իրազեկության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում	2011թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում, ՀՀ ոստիկանության և <<Կանանց իրավունքների կենտրոն>> հասարակական կազմակերպության միջև իրականացվող համագործակցության շրջանակներում, <<Ընտանեկան բռնության ենթարկված կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության>>, ինչպես նաև <<Գենդերային բռնության >> հիմնահարցերով կազմակերպվել և անց են կացվել դասընթացներ ոստիկանության ակադեմիայում և ուսումնական կենտրոնում վերապատրաստում անցնող ոստիկանության աշխատակիցների համար:	Ֆինանսավորում չի պահանջվել

2.	<p>Հանցագործությունների կանխարգելման պետական հայեցակարգի պահանջների համաձայն անչափահասների շրջանում իրագրության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում</p>	<p>2011 թվականի ընթացքում անչափահասների գործերով ծառայության դպրոցական տեսուչների կողմից Երևան քաղաքի 10 հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում իրականացվող կանխարգելիչ միջոցառումների ընթացքում կազմակերպվել և անց են կացվել զրույց-զեկույցներ տարբեր իրավական թեմաներով, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել նաև «Գենդերային բռնության» թեմայով, նպատակ ունենալով բարձրացնել անչափահասների իրագրության աստիճանը վերոհիշյալի կապակցությամբ:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
ՀՀ Առողջապահության նախարարություն			
1.	<p>Գենդերային բռնության վերաբերյալ տեղեկատվության կառավարման համակարգի, այդ թվում՝ գերատեսչական վիճակագրության և ուսումնասիրությունների միջոցով բռնության ենթարկված անձանց մասին տարբեր աղբյուրներից տեղեկատվության հավաքագրման</p>	<p>ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում իրականացվել է ուսումնասիրություն «Համապարփակ հարցում Հայաստանում կանանց նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ»: Ներդրված է ընթացակարգ, համաձայն որի ընտանեկան բռնության նշաններով առողջապահական հիմնարկներ դիմած անձանց վերաբերյալ հաղորդվում է տարածքային ոստիկանության բաժանմունք, կատարելով համապատասխան գրառում բժշկական փաստաթղթերում: Դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է տարեկան հաշվետվական ձևերում:</p>	<p>ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ Պետական բյուջե</p>

	մեխանիզմի մշակում և դրա ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում		
2.	Առողջապահական բուժհաստատություն ների մասնագետների համար գենդերային բռնության վերաբերյալ վերապատրաստումն երի կազմակերպում	«Կանանց իրավունքների կենտրոնի» կողմից կազմակերպվել է Արարատի մարզի թվով 35 ընտանեկան բժիշկների, բուժքույրերի և մանկաբարձուհիների համար ուսուցում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի «Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում» հայաստանյան ծրագրի շրջանակներում կազմվել է ձեռնարկ բուժաշխատողների համար «Ընդդեմ գենդերային բռնության» վերնագրով, ինչը տեղադրված է ՀՀ առողջապահության նախարարության կայքում WWW.moh.am և նախատեսված է բուժաշխատողներին համապարփակ գիտելիքներ տրամադրելու համար:	Հասարակա կան կազմակերպությունների և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի միջոցների հաշվին

ՀՀ Կատայքի մարզպետարան			
1.	Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշման ընդդեմ գենդերային բռնության 2011թ.-ի միջոցառումների ծրագրի 3-րդ կետի տեղական ինքնակառավարմա	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ներկայացուցիչների հետ կազմակերպվել է քննարկում ՏԻՄ-երի և ՀԿ-ների, ՋԼՄ-ների մասնակցությամբ գենդերային բռնության վերաբերյալ իրազեկության բարձրացման, պետական քաղաքականության մեջ գենդերային բռնության կանխարգելմանն ուղղված մոտեցումների ներդրման, գենդերային կարծրատիպերի հաղթահարման նպատակով:	Ֆինանսավորում չի պահանջվել

	<p>ն մարմիններում գենդերային բնության կանխարգելման և տարվող քաղաքականության իրագրման աշխատանքների իրականացում</p>		
2.	<p>Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշման ընդդեմ գենդերային բնության 2011թ.-ի միջոցառումների ծրագրի 4-րդ կետի գենդերային բնության կանխարգելման և ներընտանեկան բնության հարցերին նվիրված հեռուստահաղոր- դում</p>	<p>Պատրաստվել են հարցազրույցներ «Թրաֆիքինգը որպես երևույթ», «Ըստ մարզային ոստիկանության ներկայացրած տեղեկատվության անդրադարձ 2011թ. արձանագրված ներընտանեկան բնության մարզային դեպքերին» թեմաներով և հեռարձակվել մարզային ՋԼՄ-ներով:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
3.	<p>Կոտայքի մարզպետարանում հանդիպում և</p>	<p>«Սպիտակ ժապավեն» քարոզարշավի շրջանակներում ակցիայի անցկացում, անդրադարձ գենդերային և ներընտանեկան բնության հիմնախնդրին և առանձնահատկություններին՝ ըստ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

	<p>քննարկում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի պատասխանատուի հետ նոյեմբերի 25-ից դեկտեմբերի 10-ը <<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> ամենամյա համաշխարհային քարոզարշավի շրջանակներում</p>	<p>Կոտայքի մարզում հայտնաբերված և արձանագրված դեպքերի</p>	
ՀՀ Լոռու մարզպետարան			
<p>1.</p>	<p>ՄԻԱՎ/ՉԻԱՀԻ. թրաֆիքինգի կանխարգելում և զոհերի շարունակականություն</p>	<p>Կատարվել են իրազեկման աշխատանքներ, հանդիպումներ մարզի բոլոր քաղաքներում <<Ընդդեմ գենդերային բռնության>> թեմայով:</p>	<p>Լոռու մարզպետարան, ՀԿ_ներ,, միջազգային կազմակերպություններ, քաղաքապետարաններ, համայնքապետարաններ /ֆինանսավորում չի պահանջում/</p>
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան			
<p>1.</p>	<p>ՀՀ Վայոց ձորի մարզպետի շրջաբերական նամակը մարզի համայնքների</p>	<p>Բացահայտված 3 դեպքերի ուղղությամբ ձեռնարկվել են համարժեք աշխատանքներ 2011թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին: 1.Ալկոհոլով տառապող անձը ներկայացվել է նարկոլոգիական դիսպանսեր բուժման: 2.Աշխատելու ցանկություն հայտնած կնոջը բռնացող ամուսինը</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

	<p>ղեկավարներին բացահայտելու համայնքներում առկա գենդերային բնության դեպքերը</p>	<p>ենթարկվել է պատասխանատվության: 3.Կնոջ նկատմամբ ֆիզիկական բռնություն իրականացնող անձը ամուսնալուծությամբ հեռացվել է ընտանիքից:</p>	
2.	<p>ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 17-ի նիստի N 23 արձանագրային որոշմամբ հաստատված <<Ընդդեմ գենդերային բնության ազգային ծրագիրը>> քննարկել մարզխորհրդի նիստում</p>	<p>Քննարկումը կազմակերպվել է 24.06.2011թ., քննարկմանը մասնակցել են մարզպետարանի աշխատակազմի տարածքային կառավարման վարչությունը և ԸԿԵԻՊ բաժինը:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
3.	<p>Մարզում գենդերային հարցերով խորհրդատվական մարմինների, Հ/Կ-ների ներկայացուցիչների, լրագրողների համար գենդերային բնության հիմնախնդիրների վերաբերյալ</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ներկայացուցիչների հետ կազմակերպվել է քննարկում ՏԻՄ-երի և ՀԿ-ների, ՋԼՄ-ների մասնակցությամբ գենդերային բնության վերաբերյալ իրազեկության բարձրացման, պետական քաղաքականության մեջ գենդերային բնության կանխարգելման ուղղված մոտեցումների ներդրման, գենդերային կարծրատիպերի հաղթահարման նպատակով:/25.10.2011թ./</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

	իրազեկման աշխատանքների իրականացում		
4.	<<Ընդդեմ գենդերային բռնության աջակցության 16- օրյակի ծրագրի>> շրջանակում հանդիպում Վայոց ձորի մարզի համայնքների ղեկավարների, մարզպետարանի աշխատակիցների, Հ/ Կ-ների ներկայացուցիչների հետ	ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ իրականացվել է հանդիպում մարզպետարանի կանանց հիմնահարցերով հանձնաժողովի հետ: /02.12.2011թ./	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Արմավիրի մարզպետարան			
1.	Մարզային ենթակայության կազմակերպություն ներում, տեղական ինքնակառավարմա ն մարմիններում /այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմ, բուժ հիմնարկներ,	Մարզի 25 համայնքներում, բուժհիմնարկներում, հանրակրթական դպրոցներում ընդդեմ գենդերային բռնության իրազեկման նպատակով կազմակերպվել է կլոր սեղաններ, սեմինար- հանդիպումներ:	միջազգային և տեղական հ/կ-ներ

	<p>կրթական հաստատություններ / գենդերային բռնության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում</p>		
2.	<p>Մարզի հանրակրթական դպրոցներում 7-9 րդ դասարաններում գենդերային բռնության կանխարգելման նպատակով անցկացնել շարադրություն՝ համապատասխան թեմաներով</p>	<p>Մարզի հանրակրթական թվով 10 դպրոցներում անցկացվել հանդիպումներ, տրամադրվել է գենդերային բռնության իրազեկմանը վերաբերող նյութեր, ցուցադրվել ֆիլմեր, հանձնարարվել է <<Հավասարը հավասարին>> թեմայով շարադրություն:</p>	<p>Մարզպետարանի աջակցությամբ</p>
3.	<p>Մարզի բուժհաստատություններում սեռերի կանխորոշման և կանխարգելման խնդրի ուղղությամբ հետազոտության իրականացում և արդյունքների քննարկում</p>	<p>Բուժհաստատություններում անցկացվել է հետազոտություն միաժամանակ բուժանձնակազմի և հղիների հետ կազմակերպվել է հանդիպումներ, որում իրազեկվել են գենդերային հավասարության, գենդերային բռնության երևույթների մասին:</p>	<p>Մարզպետարանի աջակցությամբ</p>

4.	Մարզում գյուղատնտեսական աշխատանքներում ընդգրկված կանանց և տղամարդկանց աշխատանքի իրավունքի պահպանման հարցի ուսումնասիրում և արդյունքների քննարկում	28 ուսումնասիրված համայնքներում կանանց աշխատանքային իրավունքները այդքան էլ պահպանված չէր: Քննարկված արդյունքում պարզ դարձավ, որ դրան նպաստել է կանանց իրենց իրավունքների մասին տեղեկացված չլինելը: Տարվում են աշխատանքներ իրագրելու նպատակով:	ՀԿ-ների աջակցությամբ
5.	ԶԼՄ-ներում գենդերային բռնության հիմնախնդիրների մասին ինֆորմացիա պարունակող նյութերի տեղադրում	Մարզային ԶԼՄ-ներով պարբերաբար հրապարակվել են գենդերային բռնության հիմնախնդիրների մասին ինֆորմացիա պարունակող նյութեր:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Արագածոտնի մարզպետարան			
1.	Մարզային ենթակայության կազմակերպություններում, երիտասարդության և գենդերային հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ներում գենդերային	<<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16 օրյակ>> ամենամյա քարոզարշավի շրջանակներում հանդիպում է կազմակերպվել մարզային գրադարանի աշխատակիցների համար: Տեղեկատվական նյութեր են տարածվել մարզի 20 դպրոցներում և 10 համայնքապետարաններում:	Ֆինանսավորում չի պահանջվել

	բռնության կանխարգելման նպատակով տեղեկատվական նյութերի տարածում		
2.	Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների գենդերային հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի անդամների, լրագրողների համար գենդերային բռնության հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկման աշխատանքների կազմակերպում	Գենդերային բռնության կանխարգելման նպատակով մարզի 4 գյուղական, 3 քաղաքային համայնքներում 10 կլոբ սեղանների, քննարկումների կազմակերպում, 216 մարդու մասնակցությամբ:	Ֆինանսավորում չի պահանջվել
3.	Հանրակրթական դպրոցների սովորողների, ուսուցիչների համար գենդերային բռնության վերաբերյալ ուսուցողական	Մարզի 20 հանրակրթական դպրոցներում անկացվել են բաց դասեր <<ՀՀ-ում ընդդեմ գենդերային բռնության միջոցառումների մասին>>, <<Գենդերային բռնության ենթարկված անձանց պաշտպանության խնդիրները>> թեմաներով:	Ֆինանսավորում չի պահանջվել

	միջոցառումների կազմակերպում		
4.	Ծնողների համար երեխաների խնամքի, դաստիարակության վերաբերյալ ուսուցման կազմակերպում	Մարզի 6 կազմակերպություններում անցկացվել է «Դրական ծնողավարություն» և «Երեխաների պաշտպանությունը բռնություններից», «Անվտանգ եմ ես, անվտանգ ես դու» թեմաներով դասընթացներ:	«Փրկեք երեխաներին» կազմակերպության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ
5.	ԶԼՄ-ներում գենդերային բռնության հիմնախնդիրների մասին տեղեկատվություն պարունակող նյութերի հրապարակում:	ՀՀ-ում ընդդեմ գենդերային բռնության հայեցակարգի, 2011թ. միջոցառումների ծրագրի իրազեկման վերաբերյալ կազմակերպված միջոցառումների մասին տեղեկատվական 3 նյութ է հրապարակվել Արագածոտնի մարզպետարանի կայքում, «Կանթեղ», «Գյուղխորհրդատվություն» թերթերում:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան			
1.	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի շրջաբերական նամակը մարզի համայնքների ղեկավարներին բացահայտելու համայնքներում առկա գենդերային բռնության դեպքերը	Բացահայտված դեպքերի ուղղությամբ ձեռնարկվել են համապատասխան աշխատանքներ:	Ֆինանսավորում չի պահանջվել
2.	ՀՀ կառավարության	Քննարկումը կազմակերպվել է, քննարկմանը մասնակցել են	Ֆինանսավորում չի

	<p>2011թ. հունիսի 17-ի նիստի 23 արձանագրային որոշմամբ հաստատված <<Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրը >> քննարկել մարզխորհրդի նիստում</p>	<p>մարզպետարանի աշխատակազմի ՏԿՎ, Ա.Ս.Ա.Վ, ԿՄՍ վարչության աշխատակիցները և ԸԿԵԻՊ բաժինը:</p>	<p>պահանջվել</p>
<p>3.</p>	<p>Մարզում կանանց հիմնահարցերով զբաղվող ՀԿ-ների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, լրագրողների ՋԼՄ-ների համար գենդերային բռնության հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում</p>	<p>Աշխատանքները իրականացվել են ՀՀ ԱՍՀՆ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, մարզպետարանի աշխատակազմի ԸԿԵԻՊ բաժնի հետ համատեղ</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

4.	<<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16- օրյակ>> հանրապետական քարոզարշավի շրջանակներում հանդիպում Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարների, մարզպետարանի աշխատակիցների, ՀԿ-ների ներկայացուցիչների հետ	Կազմակերպվել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և Մարզպետարանի կանանց հիմնահարցերով հանձնաժողովի հետ համատեղ:	Ֆինանսավորում չի պահանջվել
ՀՀ Շիրակի մարզպետարան			
1.	<<Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագրի>> ներկայացում	Կազմակերպվել է կլոր-սեղան քննարկում ՏԻՄ-երի, մարզային ենթակայության կառույցների, ՀԿ-ների, ՋԼՄ-ների մասնակցությամբ	Ֆինանսավորում չի պահանջվում
2.	<<Ընդդեմ գենդերային բռնության>> 16 օրյակ	Մարզում անցկացվել է <<Սպիտակ ժապավենի>> քարոզարշավ:	Ֆինանսավորում չի պահանջվում

3.	Հանդիպում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ներկայացուցչի հետ	Քննարկում՝ գենդերային հարցերով զբաղվող ՀԿ-ների և ՁԼՄ-ների մասնակցությամբ. թեմատիկ նյութերի, պաստառների, տեսաժապավենի տրամադրում	ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ
4.	<<Ոչ բռնությանը կանանց նկատմամբ>> քննարկումներ ուսումնական հաստատություններում	Կազմակերպվել է երթ <<Խաղաղություն տանը՝ խաղաղություն աշխարհում>> նշանաբանով:	<<Ազաթ>> ՀԿ
ՀՀ Տավուշի մարզպետարան			
1.	Հանցագործությունների կանխարգելման պետական հայեցակարգի պահանջների համաձայն մարզում անչափահասների շրջանում իրազեկության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում	Կազմակերպվել են գենդերային բռնության վերաբերյալ դասընթացներ մարզի 5 քաղաքների հանրակրթական դպրոցների անչափահասների շրջանում	Ֆինանսավորում չի պահանջվում
ՀՀ Սյունիքի մարզպետարան			
1.	“Ընդդեմ գենդերային բռնության	Կազմակերպվել են 16 քննարկումներ գենդերային բռնության թեմաներով, տեսաֆիլմերի և տեսահոլովակների դիտումներ ՀԿ-երի	Ֆինանսավորում չի պահանջվել

	ակտիվության 16 օրյակ” հանրապետական քարոզարշավի շրջանակներում միջոցառումների իրականացում	հետ համատեղ:	
2.	<<Ընդդեմ գենդերային բռնու- թյան>> Ազգային ծրագրի իրականացման լուսաբանման աշ- խատանքների իրականացում	Մշակվել և ուղարկվել են շրջաբերականներ մարզում կանանց ոլորտում գործող ՀԿ-ներին՝ իրենց ծրագրերին ծանոթանալու, համագործակցության եզրեր գտնելու համար:	Ֆինանսավորում չի պահանջվում
3.	Գենդերային բռնության դեմ պայքարի հիմնախնդիրների վերաբերյալ բանավեճ- քննարկում	Տեղական հեռուստաթերով կազմակերպվել է բանավեճ, որին մասնակցել են կանանց հարցերով զբաղվող ՀԿ-եր և մարզպետարանի աշխատակիցներ:	Ֆինանսավորում չի պահանջվում
4.	Գենդերային բռնությունը տղամարդկանց տեսանկյունից	Մարզային գրադարանում կազմակերպվել է թեմային վերաբերվող քննարկում:	Ֆինանսավորում չի պահանջվում
Երևանի քաղաքապետարան			
1.	Երևանի քաղաքապետարան ում գենդերային	Երևանի քաղաքապետի 15.07.2011թ. հ. 354-Ա կարգադրությամբ Երևանի քաղաքապետարանում ստեղծվել է գենդերային հարցերով հանձնաժողով:	Ֆինանսավորում պահանջվում

	հարցերով զբաղվող մշտական մարմնի ստեղծում		
2.	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովներում գենդերային քաղաքականության շրջանակներում գենդերային բռնության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են գենդերային բռնության կանխարգելման վերաբերյալ քննարկումներ:	Ֆինանսավորում պահանջվում
3.	Երևանի քաղաքապետարանում վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար սեմինարի կազմակերպում	Երևանի քաղաքապետարանում վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների համար կազմակերպվել է սեմինար՝ «Ընդդեմ գենդերային բռնության» թեմայով:	Ֆինանսավորում պահանջվում
4.	Դժվարին իրավիճակներում	Դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքներին տրամադրվել է տեղեկատվություն գենդերային բռնության	Ֆինանսավորում պահանջվում

	<p>հայտնված ընտանիքներին գենդերային բնույթա արդյունքում տրամադրվող աջակցության վերաբերյալ իրազեկվածության ընդլայնում</p>	<p>ենթարկված անձանց աջակցություն տրամադրող կառույցների, դրանց մատուցած ծառայությունների վերաբերյալ:</p>	
<p>5.</p>	<p>Սոցիալական ծառայությունների տարածքային և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինների աշխատակիցների շրջանում և սոցիալական ապահովության ոլորտում գենդերային քաղաքականության և շրջանում գենդերային</p>	<p>Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ՄՕՏԲ-ների կողմից սոցիալական ծառայությունների տարածքային և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինների աշխատակիցների համար կազմակերպվել են քննարկումներ, կլոր սեղաններ:</p>	<p>Ֆինանսավորում պահանջվում</p>

	<p>բռնության կանխարգելմանն ուղղված մոտեցումների ներդրմանն ու գենդերային կարծրատիպերի հաղթահարմանն ուղղված գործընթացների կազմակերպում</p>		
<p>6.</p>	<p>Մուրացիկության, անօթևանության, թափառաշրջիկության դեպքերի բացահայտում գենդերային բռնության կանխարգելում, հիմնախնդիրների վերհանում</p>	<p>Երևանի քաղաքապետարանի և ոստիկանության ԱԳ բաժինների կողմից համատեղ աշխատանք է տարվել դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքների հետ՝ վարքային խնդիրներ ունեցող անձանց հատուկ խնամքի առանձնահատկություններից ելնելով՝ տրամադրվել է խորհրդատվություն; Իրականացվել են շրջայցեր քաղաքի մարդաշատ վայրերում ոստիկանության հետ համատեղ: Ըստ անհրաժեշտության անօթևանները տեղավորվել են <<Կոֆոեդ>> բարեգործական հիմնադրամի կացարանում: ՀՀ ոստիկանության հետ համատեղ լուծվում է նաև որոշ անօթևանների անձնագիր տրամադրելու խնդիրը:</p>	<p>Ֆինանսավորում պահանջվում</p>

7.	<p>Հանրակրթական դպրոցներում և մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների համար գենդերային բռնության վերաբերյալ ուսուցողական միջոցառումների կազմակերպում</p>	<p>Հանրակրթական դպրոցներում և մասնագիտական ուսումնական հաստատություններում կազմակերպվել են զրույցների հետևյալ թեմաներով.</p> <ul style="list-style-type: none"> • Ինչ է գենդերային բռնությունը և ինչու է անհրաժեշտ նորացվող հասարակության մեջ պայքարել դրա դեմ, • Գենդերային բռնության տարատեսակ ձևերը՝ զգացմունքների վիրավորանքից մինչև արժանապատվության ոչնչացում, • Պետության դերը իրավունքների պաշտպանության գործում • Գենդերի հասկացություն, կարծրատիպեր, գենդերային դերերի բաշխում: 	<p>Ֆինանսավորում պահանջվում</p>
8.	<p>Հանրակրթական դպրոցներում ֆորումների անցկացում՝ հասարակության մեջ ընտանիքի դերի բարձրացմանն ու ամրապնդմանն ուղղված թեմաների շուրջ</p>	<p>Հանրակրթական դպրոցներում կազմակերպվել են զրույցներ ընտանիքում տեղի ունեցող ֆիզիկական, սեռական, հոգեբանական բռնության, նրա հետևանքները և պետությունն ու կանանց պաշտպանելու պարտավորությունները թեմաներով:</p>	<p>Ֆինանսավորում պահանջվում</p>

<p>9.</p>	<p>Մանկավարժական կադրերի վերապատրաստման դասընթացում գենդերային բռնության թեմայի ներառում, հանրակրթական դպրոցների տնօրենների և փոխտնօրենների վերապատրաստման մոդուլում գենդերային բռնությանը վերաբերող թեմաների ներառում</p>	<p>Ուսուցիչների համար կազմակերպվել է գենդերային բռնության վերաբերյալ իրազեկության բարձրացման և ուսուցողական միջոցառումների: << Հասարակագիտություն>> առարկայի ուսուցիչների վերապատրաստման մոդուլում ներառվել են գենդերային բռնությանը վերաբերող թեմաներ, կազմակերպվել է <<Քաղաքացիական հասարակության ձևավորումը պետության և հասարակության մեջ>> և <<Քաղաքացիական հասարակություն, քաղաքացիական մասնակցություն>> թեմաներով կլոր սեղան և գենդերային բռնությանը վերաբերող ֆիլմերի դիտում:</p>	<p>Ֆինանսավորում պահանջվում</p>
-----------	--	--	---------------------------------